

**ՀԱՅ-ԻՏԱԼԱԿԱՆ ԱՌՆՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԶԵՆՈՎԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՂՐԻ-
ՄԱՀԱՅՆԻ ՄԱՍԻՆ:** Կազմեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց Վ. Ա. Միխա-
յելյանը: Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1974, 187 էջ,
գինը՝ 87 կ.:

Վերջին տարիներս Հայկական ՍՍՀ գիտու-
թյունների ակադեմիայում ղգալի աշխատանք է
տարվում ղրիմաձայ գաղութների պատմության
ուսումնասիրման ուղղությամբ: Արգեն հրապա-
րակի վրա են պատմական գիտությունների ղոկ-
տոր Վ. Ա. Միքայելյանի ղրիմի հայկական
գաղութի պատմությունը՝ Երկու հատորներից
բաղկացած աշխատությունը, ինչպես և նույն
հարցին նվիրված վերջերս լույս ընծայված նրա
ոուսերեն գիրքը (В. А. Микаелян, На Крым-
ской земле. История армянских поселений
в Крыму, Ереван, 1974): Այդ գրքերում
մանրակրկիտ կերպով ուսումնասիրված են
սկզբնաղբյուրները և բաղմալեզու հետազոտու-
թյունները, որոնց բարեխիղճ օգտագործմամբ
տրված է ղրիմաձայ գաղութի պատմությունը՝
սկզբնավորման ժամանակներից մինչև XIX դա-
րի վերջերս: Հեղինակը կարողացել է վեր հա-
նել մինչև այդ անձայտ մնացած կամ սակավ
ուսումնասիրված բաղմալիվ նյութեր՝ ձեռագրեր,
վավերագրեր ու հաղվագյուտ հրատարակու-
թյուններ, որոնք այս կամ այն ձևով առնչվում
են Ղրիմի հայ գաղութների պատմությանը: Նրա
ուշագրության կենտրոնում եղել են նաև Զենո-
վական հանրապետության և Ղրիմում ունեցած
նրա վարչությունների վավերագրերը, որոնց
մեջ ուշագրավ տեղեկություններ կան Ղրիմում
հաստատված հայ բնակչության քաղաքական և
սոցիալ-տնտեսական կյանքի վերաբերյալ:

Վ. Միքայելյանը բաղմալիվ նյութերից ընտ-
րել է հայ-իտալական առնչություններին վերա-
բերող, XIII—XV դդ. գրված վավերագրեր՝ ղե-
տեղելով դրանք գրախոսվող ժողովածուում:
Հրապարակված փաստաթղթերը մեծ արժեք ու-
նեն ոչ միայն հայ-իտալական հարաբերություն-
ների, այլև ղրիմահայության և ընդհանրապես
Ղրիմի թերակղզու պատմության ուսումնասիր-
ման համար:

Հայտնի է, որ շատ վաղ ժամանակներից
սկսած Ղրիմում հանդրվանել էին օտար տիրա-
պետության և անվերջանալի պատերազմների
հետևանքով իրենց հայրենիքից հեռացած հայեր,
որոնք ղգալի ղեր էին խաղում այդ թերակղզու
քաղաքական, տնտեսական և մշակութային
կյանքում: Միանգամայն իրավացի է աշխատա-
սիրողը՝ ժողովածուի առաջաբանում նշելով, թե
ղրիմը այն կամուրջն էր նաև, որի վրայով
հայ գաղթականական հոսանքները ղալիս և
անցնում էին Արևմուտք, ծնունդ տալով նորա-
նոր ղաղթօջախների Մոլդավիայում, Լեհաստա-

նում և այլուրս (էջ 7): Զենովայի հանրապե-
տությունը, որի տիրապետության տակ, սկսած
XIII դարի 60-ական թթ. մինչև XV դարը, ալե-
լի բան 200 տարի, գտնվում էին Ղրիմի հարա-
վային ափերը, ղեր կարող հաղլի շտանլ այդ
թերակղզում հաստատված հայ գաղթականու-
թյանը: Ուստի և Զենովայի հանրապետության
պաշտոնական գրագրություններում, իսկ հետա-
ղայում՝ 1453—1475 թթ. Զենովայի Սուրբ Գե-
վորգ բանկի փաստաթղթերում արտացոլվել է
նաև հայ գաղթականների կյանքը: Վերոհիշյալ
նյութերից Վ. Միքայելյանը ժողովածուում ներ-
կայացնում է 75 փաստաթղթեր, որոնք ղրվել են
1289 թ. ապրիլի 23-ից մինչև 1475 թ. կեսերն
ընկած ժամանակաշրջանում: Այդ փաստաթղթե-
րը բաղված են ղեռես անցյալ ղարում հրատա-
րակված իտալական ժողովածուներից, իսկ մի
քանիսն էլ նախասովետական շրջանի հայկա-
կան ու ոուսական պարբերականներից:

Վավերագրերի մեծ մասը թարգմանվել է լա-
տիներենից, իսկ մի շարք փաստաթղթեր ոու-
սերենից: Վերջին ղեպում հայերեն թարգմա-
նությունները համեմատվել են լատիներեն օրի-
նականների հետ: 6 օգոստոսի 1455 թվակրի նա-
մակը, որով Կաֆայի հայերը ղիմել են Սուրբ
Գևորգ բանկի խնամատարներին, շարաղրված է
եղել շատ խրթին լեղլով (ներկայացնում է իտա-
լերենի տարբեր խոսվածքների խառնուրդ) և ժո-
ղովածուի կաղմողի նախաձեռնությամբ այդ վա-
վերագրի թարգմանությունը ժամանակակից ի-
տալերենի կատարվել է Զենովայում:

Փաստաթղթերը ներկայացված են հինգ բա-
միններում: Առաջինում XIII դարում Կաֆայում
կաղմված արձանագրություններ են, որոնք վե-
րաբերում են տեղական նոտարական գրասեն-
յակում հայերի կնքած տնտեսական գործարք-
երին: Այդ վավերագրերը, որոնք առաջին ան-
ղամ հրատարակվել են Բուխարեստում 1921 թ.
ոումինացի գիտնական Գ. Յ. Բարտիանիի կող-
մից, ուշագրավ տեղեկություններ են պարունա-
կում ղլխավորապես ղրիմահայ առևտրական-
ների վերաբերյալ: Օրինակ, 1289 թ. ապրիլի
23-ին Կաֆայում գրված նոտարական ակտով
ղրիմահայեր Պարոգային և Կոստարին շնորհ-
վում է նալի վարձակալական իրավունք՝ Տրա-
պիզոն հացահատիկ տեղափոխելու համար: Մեկ
այլ փաստաթղթով (գրված 1289 թ. հունիսի
23-ին) վավերացված է միջնորդի միջոցով ոմն
Պետրոսի ապրանքների վաճառքը: Լետաբրքա-
կան է առևտրականներ Ֆրանչեսկո Սոանեի և

Հայ Սիմոնի միջև 1289 թ. հունիսի 26-ին կնքված պայմանագիրը, որով նրանք հավ են վարձում իրենց ապրանքները Կաֆայից Տրապիզոն տեղափոխելու համար, իսկ մեկ այլ զրիմահայ՝ Կիրակոսը 1289 թ. հուլիսի 18-ին առևտրական էրրիակոյին պարտ է տալիս՝ Սիրիայում կամ այլ վայրում դրամագույնը հաստանալու պայմանով։ Ուսումնասիրողները թրվով ոչ այնքան շատ այս վավերագրերով (ընդամենը հինգ) որոշ պատկերացում կարող են ստանալ այն հեռավոր ժամանակներում իրականացվող առևտրական գործարքների վերաբերյալ։

Հաջորդ բաժնում ներկայացված են Կադաբրիայի (Ղրիմի) գրասենյակի՝ XIV դարում կազմված մի քանի կանոններ, որոնք բաղված են իտալացի գիտնական Սետուլի 1838 թ. հրատարակած ժողովածուից։ Կաֆայում գտնվող ջնոպացի և տեղացի պաշտոնյաների գործունեությունը ղեկավարելու համար գրված այդ կանոններում նյութեր կան նաև թերակղզու հայ բնակչության կյանքի ու կենցաղի առանձին հարցերի մասին։

Երրորդ բաժնում հրապարակված նյութերը վերաբերում են եկեղեցական հարցերին։ Դրանք երեք վավերագրեր են, որոնք արտացոլում են կաթոլիկ եկեղեցու հետ զրիմահայության հարաբերությունները։ Որեք փաստաթղթերն էլ վերցված են հայկական պարբերականներից։

Մյուս բաժնում բերված են վավերագրեր Զենոպայի սեծովյան գաղթավայրերի 1449 թ. կանոնադրությունից, որոնք համասարապես վերաբերում են նաև Ղրիմի հայ բնակչությանը։ Այս մեծածմեր կանոնադրությունը 1863 թ. լատիներենից ռուսերեն է թարգմանել ռուս գիտնական Վ. Յուրգենիչը և բնագրի հետ զուգահեռ լույս էրձայել «Պատմություն և հնություններ սիրողների Ողեսայի բնակչության տեղեկագրում»։

Վերջին բաժնում գետեղված են 1453—1475 թթ. բնագրում Կաֆայի իշխանությունների ու ազգային համայնքների և Զենոպայի Սուրբ Դեոդոբանի խնամատարների փոխանակած մի քանի տասնյակ արժեքավոր գրությունները։ Այս նյութերը վերցված են 1868—1871 թթ. իտալացի գիտնական Ամեդեո Վինչայի հրապարակած ժողովածուից։ Քաճնի ամենավերջում գետեղված է Տրանսիլվանիայում գտնվող Ալբա-Յուլիա (Կարլսբուրգ) քաղաքի ավագներից, պապական ներկայացուցչի, Դոմինիկի հաղորդումը թուրքերի կողմից 1475 թ. Կաֆան գրավելու մասին։ Նամակն ուղղված է հունգարական թագավորի ղեկավարողին։ Արժեքավոր այս վավերագիրը հանված է Ողեսայի Պատմություն և հնություններ սիրողների բնակչության նիստերի արձանագրություններից։

Հրապարակված փաստաթղթերի մեջ հատկապես մեծ արժեք ունեն 1449 թ. Սեծովյան գաղթիկների համար մշակված կանոնները, որոնց մեջ ուշագրավ շատ նյութեր կարելի է գտնել հատկապես Կաֆայի հայ բնակչության անցյալ կյանքի համարյա բոլոր կողմերի վերաբերյալ։ Կարևոր են Հոռմի պապ Հովհան XXII-ի 1318 թ. նամակը Կաֆայի հայերին, Հեռաբրբրի և նաև նույն քաղաքի հայ բնակչության ու հայ հոգևորականների 1438 թ. ժողովի հանձնարարականը կաթոլիկոսի մոտ ուղարկվող պատգամավորներին՝ պապի կողմից հրավիրվող Ֆլորենցիայի տիեզերածոցովին մասնակցելու համար։ Սուրբ Գեորգ բանկի խնամատարների և Ղրիմի վարչությունների ու հատկապես ազգային համայնքների գրագրությունները, որոնցից կարևորագույնները հրապարակված են ժողովածուի մեջ, նոր տեղեկություններ են պարունակում զրիմահայության պատմության վերաբերյալ՝ թուրքական գրաման նախօրյակին։

Անհրաժեշտ է նշել, որ ժողովածուում գետեղված նյութերն ընտրված են մեծ բախնդրությամբ։ Առաջարանի մեջ Վ. Միքայելյանը զրիմահայության պատմության ընդհանուր ֆոնի վրա արժեքավորել է հրապարակվող վավերագրերը և տվել աղբյուրագիտական անհրաժեշտ տեղեկություններ։ Բոլոր փաստաթղթերի համար կազմված են պատշաճ համառոտագրություններ, իսկ վերջում բերված են գիտական ծանոթագրություններ։ Շնորհակալ գործ է կատարել աշխատասիրողը գրքի վերջում գետեղելով բոլոր 75 փաստաթղթերի համառոտագրությունների ռուսերեն թարգմանությունները, որանով այդ վավերագրերն ինչ-որ չափով մատչելի են դարձել նաև ռուս բնակիչներին։

Այժմ մի քանի գիտություն ծանոթագրությունների վերաբերյալ։ Մանոֆագրելով № 46 վավերագիրը, որի վերջում հայերեն գրված բազմաթիվ անունները բաց է թողել բնագրի առաջին հրատարակող Վինչան, Վ. Միքայելյանը գտնում է, որ հայերեն գրված անունների առկայությունը «մի անգամ ևս զայիս է հերքելու այն պնդումը, թե իբր զրիմահայերը կորցրել էին իրենց մայրենի լեզուն և խոսում էին թաթարերեն» (ծան. 71, էջ 163)։ Զվիճելով հեղինակի հետ զրիմահայերի թաթարախոս (զփշաղախոս) լինելու կամ չլինելու հարցի շուրջ, գտնում ենք, որ հայերեն գրված անունների առկայությունը ղեկավար լուրջ կովան չէ պնդելու, թե զրիմահայերն այն ժամանակ զփշաղախոս չէին։ Հայտնի են շատ դեպքեր, երբ արդեն վաղուց հայերենը մոռացած և զփշաղախոս դարձած հայերը երկար ժամանակ պահպանում էին թե՛ իրենց հայկական անունները և թե՛ բնիկ հանրապետության բոլոր կարգի գրությունները հայե-

բնն տառերով, բայց զփշաղերեն շարադրելու սովորությունը:

Հրապարակված մի քանի փաստաթղթերում հայոց կաթողիկոսն անվանվում է հայոց պատրիարք, սակայն ծանոթագրություններում կաթողիկոսի փոխարեն նշված է Կ. Պոլսի պատրիարքը (ծան. 95):

Չնայած այն բանին, որ Վ. Միրայեյանն իրավացիորեն կասկած է հայտնել Կոստուլ-բեյի (հոթուլ-բեյի) սյունեցի լինելու վերաբերյալ, բայց անհասկանալիորեն ծանոթագրել է՝ «Կոստուլ-Բեյ Սյունեցի» (ծան. 93, էջ 166), իսկ հաջորդ ծանոթագրության մեջ՝ «Կոստուլ-Բեյ Սյունեցի»:

Ծանոթագրությունների մեջ արված են վավերացրելու հանդիպող զրամական միավորների բացատրությունները, բայց միշտ չէ, որ զրանք բավարար պատկերացում են տալիս այդ միավորների վերաբերյալ: Օրինակ, թերի են բացատրված «հիպերպեր»-ը (ծան. 9) և «սուղալական ասպր»-ը (ծան. 13):

Ճիշտ է բացատրված № 15 վավերացրում

հանդիպող «արդուլիներ» բառը, որ նշանակում է պահակներ, ոստիկաններ, դատավորներ (ծան. 31, էջ 158), բայց այն ոչ թե թուրքական, ինչպես նշված է ծանոթագրության մեջ, այլ մոնղոլական ծագում ունի: Նշված թերությունները ոչ մի կերպ չեն նվազեցնում գիտական ծանոթագրությունների արժեքը, որոնք բնդհանրապես կազմված են գիտական պատշաճ բարեխղճությամբ:

Վ. Միրայեյանի «Հայ-իտալական առևտրականներ» ժողովածուն արժեքավոր ներդրում է հայ զաղթավայրերի պատմության ուսումնասիրման գործում: Հրապարակված նյութերը նոր տեղեկություններ են տալիս ոչ միայն Ջենովայի հանրապետության հետ դրամահայության ունեցած փոխհարաբերությունների, այլև Ղրիմում հաստատված հայ բնակչության անցյալ կյանքի և ընդհանրապես այդ թերակղզու պատմության մոտացված կամ թերի լուսաբանված բազմաթիվ էջերի վերաբերյալ:

Վ. ԳՐԻԴՈՐՅԱՆ

ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ, ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ: Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Հրաչ Բաբիկյանի, Երևան, 1973, 373 էջ, գինը՝ 1 ռ. 42 կոպ.:

«Հայաստան» հրատարակչությունը վերջին տարիներին լույս է բնծայել Փավստոս Բուզանդի («Պատմութիւն Հայոց»), Եղիշկ Կողբացու («Եղծ աղանդոց»), Մովսես Խորենացու («Պատմութիւն Հայոց») և այլոց գործերը:

Հայ պատմիչների մատենաշարից է նաև Մատթեոս Ուրհայեցու «Ժամանակագրութիւնը»՝ պատմական գիտությունների դոկտոր Հրաչ Բաբիկյանի աշխարհաբար թարգմանությամբ, արժեքավոր ներածությամբ և օգտակար ծանոթագրություններով: Երկը ընդգրկում է 174 տարվա պատմություն (962—1136 թթ.): Իր «Ժամանակագրութիւնը» Ուրհայեցին շարադրել է նյութեր հավաքելով հիմնականում հայ մատենագիրների այն գործերից, որոնք, հեղինակի վկայությամբ, «թողնալ էին զայն իւրեանց յիշատակ»: Հեղինակի ժամանակակիցներից տարեց մարդկանցից՝ «բնդ ծերս ունէաք խօսակարգութիւնս ի քննութիւնս, որք տեղեակք էին անցեալ ամացն»: Իսկ զրբի վերջին գլուխը գրել է որպես դեպքերին ակնհասն և ականջալուր:

Մատթեոս Ուրհայեցին լայնախոհ և շրջահայաց մատենագիր է: Նա գրել է ինքնատիպ ժամանակագրություն, որը նվիրված է Մերձավոր և Միջին Արևելքի, Անդրկովկասի և հարևան ժողովուրդների պատմա-քաղաքական իրադարձություններին: Հեղինակը շարադրում է հայ պատմականության կործանման պատճառները, որի հետևանքով սկսվեց բազմաշարժար հայ ժողովրդի մասսայական արտագաղթը իր հայրենիքից:

Ուրհայեցին իր զբոսն արժեքավոր տեղեկություններ է հաղորդում իսլամկրաց արշավանքների, Մերձավոր Արևելքում իսլամիկների հիմնած կոմսությունների ու թագավորությունների մասին: Խոսում է նաև Կիլիկիայում և Կասպագետիկայում ստեղծված հայկական ավատական իշխանությունների, Ռուբինյանների հայկական անկախ իշխանության ստեղծման, թուրք-սելջուկների Մերձավոր Արևելք թագապետության մասին և այլն: Ինչպես իրավացիորեն նշում է Հ. Բաբիկյանը, «Ուրհայեցին դեպքերի ու դեմքերի սոսկ արձանագրողը չէ, այլ ուսումնասիրողը» (ներածություն, էջ XIX): Երկում Ուրհայեցին հանգամանորեն պատմում է, թե ինչպես Հայոց Պետրոս Ա Գետադարձ կաթողիկոսը (1019—1054) մի խումբ զավաճան իշխանների հետ դավեր է լարում երիտասարդ

1 Մատթեոս Ուրհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 281 (զրաբար բոլոր մեջբերումներն այս հրատարակությունից են—Ա. Գ.):